



60. ԽԱՏՈՒԿ ՕՅԸ

Կար-չըկար, մե շատ խելոք ու սիրուն ախճիկ կար: Էս ախճիկը էնքան խելոք ու սիրուն էր, որ էլչիքը դուռ ու հերթիս կղրեր ին: Մեկն էթում էր, մեկը գալում էր, հըմա ախճիկը ոչ մեկին չէր առնում: Էկան իշխանի տղերք, փայլեաններ, ախճիկը մե պայման էր դնում:

—Ով որ ուզում ա ընձի առնի, բղի ընձի ենթարկվի: Թե խեր, մեր, ախպեր, քուր էլ ունի, ընդոնք էլ բղի ենթարկվեն:

Ուզողները թողում էթում ին, ոչ մեկը չէր ուզում կնգանը ենթարկվի:

Մե տղա, որ շատ չասիք էր, խորը-մորն ասավ. —Ա՛յ խերը-մեր, էկեք էթանք էտ ախճիկն ուզե՛ք ընձի:

Խերը-մերն ասին. —Բալա՛, էնի հընչա՞ չեզի առնում, մենք ի՞նչ ունենք, որ էնի չեզի առնի, հէքուցվա ալուր էլ չունենք:

Տղեն ասավ. —Ձէ՛, որ չէ՛, էթանք ուզենք, մեզի հո չի սպանա: Հելան իրեքով էլ գացին էտ ախճկա մոտը:

Ախճկա անունը Նունուֆար էր:

Տղի խերն ասավ. —Նունուֆա՛ր ջան, իմ տղեն սրտով չեզի ուզում ա, ես էլ, իմ պառավն էլ, չեզի կըլսանք, ինչ ուզում ես, հրամայա՛: Հըմա հիմիկվանից չեզի ասում եմ, որ մենք ախկատ ենք: Էս քաղաքումը մեզնից ախկատ մարթ չըկա, օր ա հըլնում, անոթի ենք քնում, մե կտոր խաց էլ ա չի հըլնում, որ ուտենք:

Ախճիկն ասավ. —Հո՞ւր ա ձեր տղեն:

Ասին. —Դռանն սպասում ա:

Տղին կանչին, անունն Ափկար էր:

Նունուֆարը խառցուց. —Ափկա՛ր, դուք, որ ոնչ մե բան չունենք, հընչե՞ս պասկվում: Կնիկ ես տանում, որ քո խետ անոթի նստի՞:

Ափկարն ասավ. —Նունուֆա՛ր, ես չեզի սրտով սիրում եմ, որ ընձի առնես, ինչ ասես կըկատարեմ, արի մեզի կառավարա՛ր քո ուզածի նման, քո դեմը խոսող չի հըլնի: Քո պայմանին ես համաձայն եմ:

Ախճիկը տեսավ խերն էլ, մերն էլ, տղեն էլ համաձայն են հիր պայմանին, հինքն էլ համաձայնվավ ու նշանեցին: Մե չափաթից ետո տարան հիրանց տունը:

Ախճիկն ասավ.—Թե քչեր, թե ցերեկ, ով որ տանից դուս գա, մե բան բղի բերա տունը: Որ հեչ բան էլ ա չըկա, մե հատ փուչ բերեք քցե՛ք բակը: Փուչը կըվառենք, էլի օքուդ ա:

Օրական մե փուչ, մե փետ բերելով թնլում ին հայնթը: Հայնթը մե դեզ փուչ հաֆկվավ: Ամեն օր տանում ին, թունդրա բոցարկ ին անում, խաց ին թխում: Ըստոնք սկսին ջանի գալ:

Մե օր էլ Ափկարը սաղ օրը ման էկավ, բան չըթթավ: Մտածեց, ո՞նց դնուտնկ էթա տունը, կնգան ի՞նչ ասա: Էտենց մտածելով էթում էր, մեկ էլ տեսավ մե խատուկ օց. կայնավ միթկ արավ, խատուկ օցը տանա՞, թե՞ չըտանա: Վեռչը որոշեց տանա:

Օցի պոչից բռնեց բերեց տուն, կնգան ասավ.—Նունուֆա՛ր ջան, էսօր բան չըթթա, որ բերեմ, մե խատ խատուկ օց պատահավ, պոչից բռնի, բերի:

Կնիկն ասավ.—Շատ լա՛վ արիր, տար թն՛լ դեզի վրեն, թո մնա, երևում ա՛ էտ խատուկ օցն էլ բախտ ա:

Ափկարը տարավ, օցը թնլեց փչերի դեզի վրեն:

Հիմի մենք խաբար տանք էտ քաղաքի թաքավորի ախճկանից: Էս ախճիկը հիրա մարքարիղները վզից խաներ էր, չարանով դրեր էր կողը, հախարի ջրով լվացվում էր: Մեկ էլ լնգլնգը էկավ, մարքարդի չարանը տեսավ, հիմացավ օց ա, թռավ հիչավ, չարանը վերցուց ու տարավ: Թո թաքավորի ախճիկը էստեղ վն՛յ-վն՛յ անա, լն, մսկտա, մենք էթանք տենանք՝ լնգլնգն ի՞նչ հելավ: Էս լնգլնգը թռավ, էկավ էս չնսիբների փչի դեզի վիրևով հընցնում էր:

Մեկ էլ տեսավ փչի դեզի վրեն մե խատուկ օց, բերնից մարքրդի չրիղը թնլեց, օցը վերցուց ու թռավ: Նունուֆարը տեսավ, որ լնգլնգը մե բան թնլեց, օցը վերցուց, տարավ:

Վազավ, տեսավ մե չարան մարքրիդ: Բերեց, դրեց դուլթին պախեց:

Հեքսի օրը թաքավորի մարթիք սկսեցին քաղաքի քուչեքով ման գալ ու բռուալ.—Լնգլնգը թաքավորի ախճկա մե չարան մարքրիդը տարեր ա, ով որ քթեր ա, բերա տա, բերողը հիրա քաչով ոսկի կըստանա:

Էս խարսի կիսուրը մե էնենց կնիկ էր, որ քաչը տասսը փուտ էր:

Խարսը բերեց չարանով մարքրիդը տվեց կիսուրին, ասավ.—Ադե՛, առ էս մարքրիդը, թաքավորի ախճկան ա, տո՛ւր թաքավորին, քո

քաչով մեկ ոսկի կըտա, կըստանաս, էրկու ոսկի կըտաս էրկու համբալի, ոսկին կըշլկեն կըբերեն տուն:

Պառավի ոտներն ուրախութունից ջետին չեն առնում: Գնաց իրեք ճիլո խաց ճերավ, իրեք քասա վոփկ, խինգը կրուչկա էլ ջուր խմավ ու գնաց Թաքավորի պալատը:

Մարբրիդները տարավ դրեց Թաքավորի ստուլի վրեն ու կայնավ մե յանի:

Թաքավորը պառվին տեսավ, ասավ.—Վա՛յ քո տունը չըքանդվի, պառա՛վ, քո քաչով մեկ ոսկի տամ, էլ իմ խազինեն բա՞ն կըմնա:

Պառավը լեզվանի ջադու էր, ասավ.—Թաքավորի խոսկը ոսկուց էլ Թանգ ա, մարբրդից էլ:

Թաքավորը ծծղաց, ծափ տվեց, լալեն էկավ:

Թաքավորն ասավ.—Գնա ախճկաս կանչա՛:

Լալեն մարբրդի շարանը տեսավ, վազավ ախճկան աչկի լուսարավ, կանչեց:

Ախճիկն էկավ, տեսավ խոր ստուլի վրեն հիրա մարբրիդներն ա դրուկ: Շատ ուրիցավ, վերցուց ու գնաց:

Թաքավորը խազնադարին հրամայեց պառավին հիրա քաչով մեկ ոսկի տան:

Բերին հառիքից մե լուծ կախին, կշերք չինին: Պառավին դրին մե յանը, ոսկին լցին մե յանը: Էրկու լինքը մեշոք ոսկի հեկավ: Տվին համբալների չլակը, համբալները բերին տուն:

Ըտուց ետո լա՛վ-լա՛վ տներ չինեցին, հարուստացան: Ժողովուրթը ըտոնց անունը դրեց «Բիրդանադա»:

